## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.
## «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը «Հայ Եկեղեցու հանրագիտարան» շարքից հրատարակել է առաջին պրակը՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոսներին՝ սկսյալ Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետից մինչև Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանրագիտարանում տեղեկատվության կարգով ներկայացված են նաև բոլոր աթոռակից Կաթողիկոսները, սակայն առանց նրանց գործունեության վերլուծության, բացառությամբ միայն այն դեպքերի, երբ աթոռակից Կաթողիկոսը, ընտրվելով Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր վրա է վերցրել Ընդհանրական Կաթողիկոսի գործառույթները: Հանրագիտարանը հրատարակության են պատրաստել Սաթենիկ Բաբայանը, Պետրոս Հովհաննիսյանը և Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանը: Այն լույս է տեսել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանի մեկենասությամբ:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» հանրագիտարանը, լինելով Հայոց Եկեղեցու պատմության յուրօրինակ արտահայտությունը, միաժամանակ հայոց պատմության համարժեք նկարագիրն է: Ի տարբերություն նախորդների՝ այս հանրագիտարանն առավել ամբողջական ու համապարփակ է ներկայացնում Հայոց Կաթողիկոսների գործունեությունը: Թարմացվել են նաև մատենագիտական ցանկերը: Ներկայացված Հայոց Հայրապետների վավերական պատկերները սկսվում են ԺԹ դարի սկզբներից և շարունակվում մինչև մեր օրերը: Գրքում օգտագործվել են ինչպես վավերական պատկերներ, այնպես էլ նախորդ դարերի մանրանկարներ:

Խմբագրական հանձնախումբը լիահույս է, որ հանրագիտարանի լույս ընծայումը կարևոր նշանակություն կունենա Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրության և քարոզչության տեսանկյունից՝ հարստացնելով Հայ Եկեղեցու վերաբերյալ ընթերցողի գիտելիքները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*